

Լուսինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

ԺԱՄԱՆԱԿԻ ՆՇՈՒՅԹԱՎՈՐՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Only time (whatever that may be) will tell.
Stephen Hawking, A Brief History of Time

Տվյալ հոդվածը ուսումնասիրում է ժամանակային նշույթավորման լեզվաարտահայտչական միջոցները տնտեսական իրադարձություններ լուսաբանող նորություններում: Ժամանակի գործոնը ցանկացած իրադարձության բովանդակային կազմի անքակտելի մասն է կազմում: Հոդվածում հասկերոշվում են հնարավոր լեզվամիավորները, ինչպես նաև քերականական հնարները, որոնք ապահովում են ժամանակային նշույթավորումը գործարար նորություններում: Բառային մակարդակում ժամանակը արտահայտվում է մի շարք բանաձևերով, որոնք ներառում են տարբեր խոսքի մասեր, մինչդեռ քերականական մակարդակում ժամանակի որոշարկումը իրականացվում է բայական ժամանակաձևերի միջոցով:

Բանալի բառեր. ժամանակային նշույթավորում, տնտեսական իրադարձություններ, գործարար նորություններ, իրադարձության բովանդակային կառուցվածք, ժամանակային նշույթավորման լեզվամիավորներ, քերականական հնարներ, ռեալ ֆիզիկական ժամանակ

Իրադարձությունները գոյություն ունեն տարածության և ժամանակի կոորդինատներում, քանի որ համաձայն արդի գիտության տվյալների օբյեկտիվ աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչ ունի տարածաժամանակային բնույթ:

Վերլուծելով իրադարձության տարածաժամանակային առանձնահատկությունները, հարկ է նշել, որ իրադարձություններին վերաբերող ժամանակի և տարածության ցուցիչները միշտ չէ որ ունեն հավասարազոր նշանակություն: Այսպես, Ջ. Վենդլերը նշում է, որ իրադարձություններն ամենից առաջ ժամանակային էություններ են /Vendler, 1967: 144/: Իրադարձության կառուցվածքը կազմող տարրերի դասակարգման մեջ ժամանակային վերագրության ցուցիչը առաջնայիններից մեկն է, որովհետև, ինչպես իր ուսումնասիրության մեջ նշում է Ն. Դ. Արուտյունովան, որոշ իրադարձություններ որոշակի իմաստով ընդհանրապես տարածական տեղայնացում չունեն և կարող են նկարագրվել միայն ժամանակի առանցքի վրա դրանց փոխադասավորության /կոնֆիգուրացիա/ եզրույթներով /Арутюнова, 1998: 508/: Իրադարձությունների հենց այդպիսի տեսակ է դիտարկում իր աշխատության մեջ Ջ. Կիմը, սահմանագատելով երկու իրադարձություններ, որոնք նկարագրվում են տրամաբանական համարժեք միևնույն նախադասությամբ, տարբեր տեղայնացումների հիման վրա՝ տարածաժամանակային և գուտ

ժամանակային (հմմտ. Սոկրատեսը մահացել է և Քսանտիպան այրիացել է) /Kim, 1969/: Այսպիսով, իրադարձությունների ժամանակային շրջանակները տարբեր են: Ժամանակային առումով հեղինդուկ սահմաններ ունեցող իրադարձությունները լիակատար հստակությամբ չեն ընկալվում որպես իրադարձություններ: Հետևաբար, ժամանակի մեջ սովորաբար տեղայնացված են ընկալվում այն իրադարձությունները, որոնք կոնկրետ, որոշակի պահի կամ ժամանակահատվածում, իրականում կատարվող կամ կատարված իրադարձություններ են /Булыгина, Шмелев, 1997: 47/:

Տվյալ ուսումնասիրության նպատակն է վերլուծել ժամանակային նշույթավորման հնարավոր լեզվաարտահայտչական միջոցները տնտեսական իրադարձություններ լուսաբանող նորություններում:

Խոսելով իրադարձության ժամանակային ցուցիչի մասին, պետք է տարբերակել ժամանակի հասկացությունն ընդհանրապես և կոնկրետ իրադարձության ժամանակը: Ժամանակն, ընդհանրապես շրջապատող աշխարհի, տիեզերքի և հենց իր մասին մարդու գիտական և կենցաղային բոլոր պատկերացումների հիմքերից մեկն է:

Մարդու պատկերացումները և ըմբռնումները ժամանակի մասին միաժամանակ բացարձակ են և հարաբերական: Բացարձակությունը կապված է ժամանակի՝ որպես շարժվող մատերիայի գոյության հիմնական ձևերից մեկի օբյեկտիվ իրականություն լինելն ընդունելու հետ, իսկ հարաբերականությունն արտահայտվում է նրանով, որ մարդու պատկերացումները ժամանակի մասին ամբողջական չեն, փոփոխական են, կախված ժամանակի հատկանիշների մասին բնագիտական տվյալներից:

Ժամանակն այնպիսի կատեգորիա է, որը կարող է փոխել իր իմաստային լիցքը՝ պայմանավորված լինելով նրանով, թե առարկաների ինչ տեսակի համար է կիրառվում, այսինքն՝ գոյություն ունի ֆիզիկական գործընթացների ժամանակ (իրական, ֆիզիկական ժամանակ) և մարդկային ժամանակ (պատմական, սոցիալական, հոգեբանական), եթե հարցը վերաբերում է հանրության զարգացման պատմությանը, անհատի հոգևոր կյանքին:

Փիլիսոփայության տեսանկյունից ժամանակը, որպես օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրականություն, իր տարածականության մեջ անդառնալի է: Արիստոտելի ըմբռնմամբ ժամանակը հարաբերական է, այն դիտարկվում է որպես մի բան, որը կարգավորում է անհատական գիտակցության տպավորությունները և գոյություն ունի միայն գիտակցության մեջ և գիտակցության շնորհիվ /տե՛ս Шарпов, 2000: 5-10/:

Ժամանակի մասին բնագիտական պատկերացումների զարգացման գործում կարևոր դեր է կատարել Ի.Նյուտոնի բացարձակ ժամանակի տեսությունը, որտեղ այն ներկայացված է հոսքի տեսքով, այսինքն՝ ընկալվում է որպես մաքուր վիճակում տևողություն, ինչը հավասարաչափ հոսում է անցյալից դեպի ապագան: Այն իրադարձությունների շտեմարան է, որոնք կարող են այն լցնել, կարող են և չլցնել. Իրադարձությունների ընթացքը

Ժամանակի շարժման վրա չի ազդում: Ժամանակը միաժամանակ անընդհատ է, անվերջ, համագործածական, միատարր /Ньютон, 1936/:

Ըստ Պ. Դ. Ուսպենսկու, մենք ժամանակ ենք անվանում այն հեռավորությունը, որ բաժանում է իրադարձությունները նրանց հաջորդականության կարգով և կապում դրանք տարբեր նպատակներով /Успенский, 1992/:

Ժամանակի հաջորդականության բնույթը նշվում է նաև Ե.Լ.Երզնկյանի մենագրությունում, որտեղ հեղինակը նշում է, որ ժամանակը՝ որպես մատերիայի գոյության ընդհանրական ձև, արտացոլվում է նրա բոլոր կառուցվածքային մակարդակներում և արտահայտում է եղելության, բոլոր երևույթների, գործողությունների, աշխարհի բոլոր նյութական համակարգերի, գործընթացների փոփոխության հաջորդականությունը /Ерзинкян, 2013: 273/:

Որպես այդպիսին, իրադարձության ևս մի բաղադրիչ է հաճախականությունը, ժամանակային տարածության մեջ իրադարձության կրկնողականության գաղափարը: Երևույթը կարող է իրադարձություն կոչվել, եթե այն կատարման իր բոլոր հատկանիշները և հանգամանքները պահպանելու պայմանով բավական հազվադեպ է կատարվում: Համապատասխանաբար, որքան հաճախ է կատարվում երևույթը, այնքան փոքր է հավանականությունը, որ այն իրադարձություն է /Ирисханова, 1997: 10/: Հարկ է նշել, որ իրադարձության կատարման հաճախականությունը բավական հարաբերական է և որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ հաշվի առնելով նշյալ իրադարձության (մեր դեպքում՝ տնտեսական) կարևորությունը:

Քննության առնելով իրադարձությունը լայն իմաստով, այսինքն այն ամենը, ինչ կատարվում է և գոյություն ունի աշխարհում (ներառյալ գործընթացներն ու գործողությունները), հարկավոր է նաև ուսումնասիրել իրադարձության բնութագրի ևս մեկ հիմնախնդիր՝ դրա տևողության փաստը: Բազմաթիվ գիտնականներ այն կարծիքին են, որ իրադարձությունը կարող է դիտարկվել և՛ որպես իրերի դրության ակնթարթային փոփոխություն, որևէ կետ ժամանակի առանցքի վրա, ինչին բնականաբար հետևում է ավարտուն ամբողջությունը, և՛ որպես իրադրություն, որը բնորոշվում է ժամանակային որոշակի, երբեմն բավական երկար տևողությամբ: Յանկացած իրադարձություն, վերջին հաշվով, կարելի է բաժանել բաղադրիչների՝ մի քանի այլ ավելի փոքր իրադարձությունների, գործողությունների: Դա հատկապես վերաբերվում է ծավալուն, գլոբալ իրադարձություններին, որոնք դառնում են թողարկվող նորությունների իրական նշյալներ:

Կատարելով իրադարձության, նրա հատկանիշների և բաղադրիչների մասին առօրեական պատկերացումները բացահայտելուն ուղղված մի շարք հոգեյեզվաբանական փորձեր, Վ. Յա. Շաբեսը հանգում է այն եզրակացության, որ իրադարձության մոդելը կարող է ներկայացվել եռամիության տեսքով, որպես միկրոիրադարձությունների իրագործման շարք. իրադարձությանը նախորդում է որևէ այլ իրադարձություն, ինչի հետևանք կարող է լինել մի այլ իրադարձություն (Նախաիրադարձություն – Բուն իրադարձություն –

Հետիրադարձություն): Ըստ էության, իրադարձությունը (համապատասխանում է Բուն իրադարձությանը) տվյալ ըմբռնմամբ նույնպես ներկայացված է երեք բաղադրիչների միասնության տեսքով՝ Ներուժ – Իրագործում – Արդյունք, այսինքն՝ իրադարձությունը հառնում է որպես ժամանակի մեջ ծավալված համակարգված գործունեություն, ինչն ուղղված է որևէ նպատակի /Шабеч, 1989: 130/:

Այս առումով, հարկ է անդրադառնալ այն հարցին, թե ինչպես է գործարար նորությունների տեքստում արտահայտվում նախաիրադարձությունը: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, հեղինակը հիմնականում իր հոդվածը մեկնարկում է նախաիրադարձության նկարագրմամբ, դրանով իսկ միանգամից ընթերցողին ծանոթացնելով բուն իրադարձության նախապատմությանը: Այդ մասին է վկայում փաստական նյութի ուսումնասիրությունը՝

When Apple bought Beats, best known for making brightly coloured headphones, for around \$3 billion last year, many wondered what the technology giant had in mind. They now have their answer. On June 8th, at Apple’s annual gathering for software developers in San Francisco, it revealed a new music-streaming service, based on one it had acquired as part of Beats. Tim Cook, Apple’s boss, promised that, “It will change the way you experience music forever.” Others on the stage called it “revolutionary” (The Economist, June 13–19, 2015).

Այսպիսով, սույն իրադարձությունը մեկնարկում է նախաիրադարձության այն տեղեկությից, որ Apple ընկերությունը անցյալ տարի գնել էր Beats-ը, արթնացնելով շատերի հետաքրքրությունը: Այնուհետև, երկրորդ նախադասությունը ընթերցողին իրազեկում է ներկայիս իրադարձության մասին, այն է թե՛ Apple-ը հունիսի 8-ին հայտարարել է նոր երաժշտական ծառայության մեկնարկի մասին:

When the world’s first electronic cigarette was invented in Beijing in 2003, the device was hailed as a godsend for tobacco friends.... Today over 95% of e-cigarettes are made in China, but until recently the Chinese themselves have shown little interest in the product (The Economist, June 13-19, 2015).

Այս օրինակում, հոդվածը սկսում է նախաիրադարձությունից, թե Պեկինում 2003 թվականին հայտնագործել են էլեկտրոնային սիգարետներ, որոնք ծխողների համար համարվել են Աստծո կողմից շնորհված մի երևույթ: Արդյունքում, ներկայումս, 95% նույնանուն ապրանք է արտադրվում Չինաստանում, սակայն մինչ վերջերս չինացիները առանձնապես մեծ հետաքրքրություն չեն ցուցաբերել դրա նկատմամբ: Վերլուծենք հաջորդ օրինակը՝

When Marissa Mayer joined Yahoo as chief executive, employees put posters on the walls emblazoned with the word “Hope”, implicitly comparing their new leader to President Barack Obama by mimicking his campaign propaganda. Two and a half years later, Ms Mayer may have given some Yahoo staff a greater belief in the company (The Financial Times, January, 2015).

Վերոհիշյալ օրինակում, նախաիրադարձությունում նշվում է երկու և կես տարի առաջ Մարիսա Մեյերին որպես Yahoo ընկերության գործադիր տնօրենի նշանակման և մյուս աշխատողների՝ նրա անձի նկատմամբ թերահավատ մոտեցման մասին: Այդուհանդերձ, ներկայիս իրադարձությունում հաղորդվում է Մեյերի հաջողության մասին ընկերության աշխատակիցներին հավատ ներշնչելու գործում:

Այսպիսով, հողվածներում, նախաիրադարձությունների առկայության դեպքում, վերջիններս հիմնականում մեկնարկում են լրահոսը, տեղեկացնելով ընթերցողին նախապատմությանը, հաղորդելով նրան ընդհանուր պատկեր՝ ներկայիս կատարվող իրադարձության ամբողջական ընկալման համար:

Նշյալ մեկ խոշոր իրադարձությունը մի քանի իրադարձությունների մասնատելու գաղափարը հանգեցնում է այդ իրադարձության տևողության, այս կամ այն իրադարձության զբաղեցրած ժամանակային հատվածի իմացական ընկալման և դրա տևողության տեսանկյունից նշյալ իրադարձության լեզվաարտահայտչական միջոցների որոշակիացման անհամապատասխանությունների առաջացմանը:

Իրականում գոյություն ունեցող ժամանակը իր դրսևորումների բազմազանության մեջ արտացոլվում է լեզվի մեջ, սուբյեկտիվորեն մխրճվելով մարդու գիտակցության մեջ: Լեզուն, ինչպես հայտնի է, մարդկային վարքագծի այլ ձևերի հետ միասին շարունակականություն է ստեղծում, այդ պատճառով ժամանակի կատեգորիան լեզվում կարելի է դասել այն հասկացությունների շարքին, որոնց օգնությամբ որոշվում է մարդու լեզվական և արտալեզվական գործունեությունների միջև եղած այն հարաբերակցությունը, որի միջոցով իրական աշխարհը փոխակերպվում է մարդկային գիտակցության պրոյեկցված աշխարհի: Լեզվի մեջ ժամանակ արտահայտող բառային միավորները արտացոլվում են մարդու գիտակցության մեջ ժամանակային հասկացությունների ձևով՝ ձևավորելով հասկացական ժամանակ: Այսպիսով, ժամանակի լեզվաբանական մոտեցումը լեզվում, իրական ժամանակի որոշակի մոդելի արտացոլումն է: Այստեղից բխում է, որ ժամանակի լեզվաբանական ուսումնասիրությունը հետազոտություն է տարբեր լեզվական միջոցների, որոնք նպատակաուղղված են վերհանելու իրական ֆիզիկական ժամանակը /Ерзинкян, 2013: 275-276/:

Լեզվի մեջ ժամանակի կատեգորիան արտահայտելու համար գոյություն ունի քերականական և բառային միջոցների մի կուռ ամբողջություն: Դրանք՝ ժամանակի հաղորդմանը ծառայող լեզվական հիմնական միջոցներն են՝ բայական հատուկ ժամանակային ձևերը (անցյալ, ներկա և ապառնի քերականական ժամանակ) և ժամանակ ցուցանող բառային միավորները, որոնք շատ հաճախ աչքի են ընկնում իրենց անվանական հնարավորությունների բազմազանությամբ: Այսպես, ըստ հետազոտությունների, որոշ լեզուներում հնարավորություն կա իրենց սկզբնական իմաստով ժամանակահատված նշանակող բառերի և արտահայտությունների միջոցով (օրինակ՝ ռուսեր, ժամ, օր, տարի, դար, դարաշրջան և այլն) արտահայտել /բնութագրել

նաև իրադարձությունները, որոնք կատարվում են տվյալ ժամանակահատվածում (պատմի՛ր կիրակիի մասին= այն մասին, թե ինչ կլինի կիրակի օրը), ինչը հետազոտողների կողմից մեկնաբանվում է որպես առընթերական գուգորդմամբ փոխանունություն /Падучева, 2000/:

Լեզվաբանության մեջ ընդունված է ժամանակային նշանակությունների գործածության երկու տեսակ՝ ուղղակի (բացարձակ) և հարաբերական: Առաջինը՝ միաժամանակյա, նախորդող կամ հաջորդող: Հարաբերական ժամանակը ծառայում է իրադարձությունների միաժամանակության /տարաժամանակության/ հարաբերություններն արտահայտելու համար, խոսքի պահից անկախ: Լրագրողական տեքստը, որը ներառում է տարբեր ոճերի տեքստերի բնութագրեր, տարբերվում է նրանով, որ որպես հաշվարկի սկզբնակետ օգտագործում է իրականության ընթացիկ պահը, պատմական այսօրը /Матвеева, 1990: 101/: Տեքստային մակարդակով դա իրագործվում է ժամանակի տարբեր հանգամանքների օգտագործմամբ, որոնք Օ.Ի.Մոսկալսկայան ձևակերպում է որպես սինսեմանտիկ՝ թվական+գոյական, որոնք նշում են ամիսը, գոյական, որը մատնանշում է շաբաթվա օրը, ժամանակի մակբայ /Москальская, 1981: 105/: Օրինակ՝ now, this week, on Thursday, September 21, 2015 լեզվական միջոցները ցուցադրում են ՉԼՄ հրապարակումներում ժամանակային նշույթների բազմազանությունը:

Անհրաժեշտ է իրադարձության ժամանակի տեքստային նշույթների փոխակերպման վրա ազդող արտալեզվական գործոնների շարքին դասել ՉԼՄ-ներում իրադարձության թվականի որոշման առանձնահատկությունը: Տեքստում բառային և քերականական ժամանակային նշույթների փոփոխությունները պայմանավորված են իրադարձության մասին տեքստի ստեղծման և ֆիզիկական իրականության մեջ այդ իրադարձության կատարման ժամանակային տարբերությամբ: ՉԼՄ հրապարակումները լույս են տեսնում ստույգ ամսաթիվ ունեցող լրագրում (օրաթերթ, շաբաթաթերթ): Էլեկտրոնային հրատարակության մեջ հրապարակումները զետեղման ամսաթիվ ունեն: Քանի որ բոլոր տեքստերը, որոնք ստացվում են օրվա ընթացքում, տեղադրվում են ժամանակագրական կարգով, դրանք ավտոմատ կերպով ներառվում են կայք-պարբերականի ժամանակային համատեքստում:

Այսպիսով, մանրագնին ուսումնասիրենք լեզվական բոլոր միջոցները, որոնք կիրառվում են տնտեսական իրադարձությունների ժամանակային կառուցվածքը սպահովելու համար:

Նորություններում իրադարձության իրական ժամանակը ցուցանշվում է ժամանակի պարագայի միջոցով, որի ընդունված բանաձևն է Num+N կամ N+Num, որտեղ Num-ը թվական է, իսկ N-ը տարին և/կամ ամիսը: Այս բանաձևը, համակցվելով բայի համապատասխան ձևերի հետ, հանդիսանում է իրադարձության ճշգրիտ ժամանակային նշույթավորման համընդհանուր միջոց: Օրինակ՝

The surprise ousting on **June 6th** of Deutsche Bank's embattled bosses, Anshu Jain and Jergen Fitschen caused its share price to jump by 8% (The Economist, June13-19, 2015).

On **June 8th** the government announced the lifting of the controls the country imposed in 2008 – with one big caveat (The Economist, June13-19, 2015).

Տվյալ բանաձևը կարող է ներառել ևս մեկ ժամանակի պարագա, որը ցուցանում է օրվա կոնկրետ մի մաս՝ առավոտյան, երեկոյան և այլն: Օրինակ՝

On **the morning** of **April 22**, David Pyott, CEO of Allergan, woke up to a shock (The Bloomberg Businessweek, 2015, February, N2)

Վերոնշյալ բանաձևի բացակայության դեպքում, տեքստը ձեռք է բերում իր ժամանակագրական բնութագիրը ի շնորհիվ քերականական հնարների, այսինքն՝ բայի ժամանակաձևերի, որոնք թույլ են տալիս տեղակայել իրադարձությունը անցյալի, ներկայի և ապագայի կոորդինատներում՝ ռեալ ժամանակի վերաբերյալ (նորությունների տպագրվելու կամ վերկայքում տեղադրվելու ժամանակը): Օրինակ՝

The government **is stepping up** efforts to persuade the country's 280m daily smokers – nearly one-third of the world's total – to give up (The Economist, June13-19, 2015).

Qatar Airways **has bought** a 9.99 per cent stake in British Airways' owner International Airlines Group, in a move that underlines the state-controlled Gulf carrier's determination to be a leading force in global aviation (The Financial Times, February, 2015).

The British Army **will revive** one of the most controversial special forces units of the second world war, the Chindits, as a new generation of "Facebook warriors" who will wage complex and covert information and subversion campaigns (The Financial Times, February, 2015).

Իր կիրառման հաճախականությամբ աչքի է ընկնում նաև Adj+N բանաձևը, որտեղ Adj-ը ածական է, իսկ N-ը ժամանակային որևէ հատված ցուցանող գոյական:

Last month Toronto became the fifth city where the firm's lunch-delivery service, UberEATS, is available (The Economist, June13-19, 2015).

Russia's Prime Minister Dmitry Medvedev proposed **last week** that the country formulate budgets for only one year instead of the traditional three (The Financial Times, September 8, 2015).

...the so-called Working Group, added that the Treasury's single cash account and Government Development Bank would exhaust available liquidity before the end of the year, creating a cash shortfall in **late November** or **early December** (The Financial Times, September 9, 2015).

So the cost of commuting has outpaced inflation? Over **the past decade**, yes (The Financial Times, February, 2015).

Տվյալ բանաձևում որակական ածականի առկայությունը կարող է ցուցանող ժամանակային հատվածին հաղորդել իմաստային որոշակի երանգավորում: Օրինակ՝

Seven years after the peak of the financial crisis, Iceland said that it would gradually remove the capital controls it had imposed, a sign that the economy has moved beyond its **turbulent past** (The Economist, June 13-19, 2015).

On the other hand, there's a need, assiduously promoted by the present administration, to see Russia as a great country with a **glorious past** (The Financial Times, February, 2015).

But BT said that the new agreement with its pension trustees would help the group as it faces a few **crucial weeks** that will dictate the next stage of the company's growth (The Financial Times, February, 2015).

Իրադարձության ժամանակային նշույթավորման համար օգտագործվող ևս մեկ բանաձև է Pr+N, որտեղ Pr-ը հիմնականում հանդես է գալիս ցուցական դերանվան տեսքով, իսկ N-ն՝ ժամանակային որևէ հատված ցուցանող գոյական է (շաբաթ, ամիս, տարի): Օրինակ՝

After rising by an annual average of 21% over the previous five years, visits by mainlanders are up just 6% so far **this year** (The Economist, June 13-19, 2015).

Verizon **this week** became the latest company to launch an online video service... (The Financial Times, September 9, 2015).

Վերոնշյալ Adj+N և Pr+N բանաձևերը, ընդհանուր առմամբ օգտագործվում են հեղինակի կողմից այն դեպքում, երբ տեղեկություն ներկայացվում է իրադարձության տեղի ունենալուց առնվազն մեկ օր հետո:

Ժամանակ ցուցանող մակբայների կիրառումը մեկ այլ միջոց է նորությունների ժամանակային տեղակայումը ապահովելու համար:

Latently an unfamiliar emotion has washed over Cyprus: hope (The Economist, June 13-19, 2015).

Uber **now** operates in 311 cities in 58 countries, providing more than 1m rides each day (The Economist, June 13-19, 2015).

Իրադարձության ժամանակային նշույթավորման ևս մի տարբերակ է անցյալում կատարված իրադարձության նկարագրությունը և ժամանակի ցուցանումը, որը ընթերցողի համար հանդիսանում է հաշվարկի սկզբնակետ՝ ճշգրիտ թվագրելու համար ներկայիս իրադարձությունը: Օրինակ՝

During the financial crisis, when the global economy faced its gravest threat since the 1930s, policymakers sprang into action. To stimulate the economy, central banks slashed interest rates and politicians spent lavishly... Unfortunately, however, that quick response nearly exhausted governments' economic arsenals. *Seven years later* they remain depleted (The Economist, June 13-19, 2015).

Սույն օրինակում ընթերցողը, իրագեկ լինելով 2008 թվականի մեծ ֆինանսական ճգնաժամի մասին, իսկույն հաշվարկի սկզբնակետ է վերցնում դա և ծանոթանում այդ ժամանակվա դեպքերին: Հաջորդող նախադասու-

թյուններում, seven years later բառակապակցությունից, ռեալ ֆիզիկական ժամանակում գտնվող ընթերցողը հասկանում է, որ դեպքերը զարգանում են 2015 թվականին:

Half a year on from pro–democracy protests that gripped Hong Kong for weeks, the city’s economy is – depending on your perspective – beginning to suffer the fallout or sailing along as if nothing much happened (The Economist, June 13–19, 2015).

Վերոհիշյալ օրինակում, ընթերցողը տեղակայված լինելով ռեալ ժամանակի մեջ և համարելով այն հաշվարկի սկզբնակետ, ետ է գնում կես տարի անց կատարվող իրադարձություններին և ապա գալիս դեպի ներկա:

Իրադարձության ժամանակային նշույթավորման համար օգտագործվում են նաև կոնկրետ օրերի անվանումներ (այսօր, վաղը, երեկ, շաբաթվա օրեր), որոնք թվագրելու համար, ընթերցողի հաշվարկի սկզբնակետը հանդիսանում է իրական կյանքի այսօրը: Օրինակ՝

Oil prices rallied **yesterday**, with US crude futures jumping 8.3 percent to settle at \$48.24 a barrel and Brent crude up 7.9 percent to settle at \$52.99, its biggest one– day gain since 2009 (The Financial Times, January, 2015).

The public battle between Alibaba executives and a powerful Chinese regulator appeared to cool off **yesterday** as the two sides met and pledged to co–operate in fighting counterfeiting (The Financial Times, January, 2015).

It’s getting more expensive to buy at auction, at least at Sotheby’s. The rates haven’t changed, but from **tomorrow** the thresholds have: commission is now 25 per cent on the first \$200,000 instead of the \$100,000 (The Financial Times, January, 2015).

The first Federal Reserve monetary policy meeting of 2015 takes place **today** and **tomorrow** (The Financial Times, February, 2015).

ExxonMobil, the world’s biggest listed oil company by market value, is set to outline its response to a 60 per cent decline in crude prices when it issues its full–year results on **Monday** (The Financial Times, January, 2015).

Պետք է նշել, որ today բառային միավորը միշտ չէ, որ նշանակում է իրական ժամանակի այսօրը, այլ այն համատեքստում իրականացնում է իր երկրորդ իմաստը՝ այժմ, այս օրերին: Օրինակ՝

In the 1950s, the fattest profits were stamped out by manufacturers and heavy industry; the scene **today** is more raucous, with technology, healthcare, finance and telecoms among the biggest earners (The Financial Times, January, 2015).

Today, long after the fabled police of political correctness patrolled academic and public life in the late 1980s and 1990s, liberals are – according to Mr Chait – afraid of speaking up for fear of bullies denouncing them as bigots (The Financial Times, January, 2015).

Այսպիսով, նորություններում տնտեսական իրադարձությունների ժամանակային նշույթավորումը կապող օղակ է տեղեկույթի և իրականության միջև՝

ելնելով հողվածի հեղինակի տեսանկյունից: Ժամանակային նշույթավորման լեզվական միջոցները ի հայտ են գալիս թե՛ քերականական (բայի ժամանակաձևեր), թե՛ բառային (թվականներ, գոյականներ, ածականներ, մակբայներ, վերջիններիս տարբեր համակցություններ) մակարդակներում: Գործարար նորություններում դրանք ապահովում են տեղեկույթի ճշգրտությունը, հավաստիությունը, ինչպես նաև արդիականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Арутюнова Н. Д. Язык и мир человека. М.: Языки русской культуры, 1998.
2. Булыгина Т. В., Шмелев А. Д. Языковая концептуализация мира (на материале русской грамматики). М., 1997.
3. Ерзинкян Е. Л. Дейксис слова: Семантика и прагматика. Ереван: ЕГУ, 2013.
4. Ирисханова О. К. Семантика событийных имен существительных в языке и речи. Автореф. дис. канд. филол. наук. М., 1997.
5. Матвеева Т. В. Функциональные стили в аспекте текстовых категорий: синхронно-сопоставительный очерк. Свердловск: УГУ, 1990.
6. Москальская О. И. Грамматика текста. М.: Высшая школа, 1981.
7. Ньютон И. Математические начала натуральной философии. М.–Л.: ОГИЗ, 1936.
8. Падучева Е. В. Пространство в облиции времени и наоборот (к типологии метонимических переносов) // *Логический анализ языка. Языки пространств*. М., 2000.
9. Успенский П. Д. Tertium Organum. Ключ к загадкам мира. СПб.: Андреев и сыновья, 1992.
10. Шабес В. Я. Событие и текст. М.: Высшая школа, 1989.
11. Шарыпов О. В. Философские вопросы научных представлений о пространстве и времени: Введение: учеб. пособие. Новосибирск: НГУ, 2000.
12. Kim J. Events and their descriptions: some *considerations* // *Essays in Honor of Carl G. Hempel*. Dordrecht, 1969.
13. Vendler Z. *Linguistics in philosophy*. Ithaca, New York: Cornell University Press, 1967.
14. The Financial Times www.ft.com
15. The Economist www.economist.com

Л. АРУТЮНЯН – *Темпоральная маркированность экономических событий.* – Темпоральная маркированность экономических событий является неотъемлемым компонентом смысловой структуры любого экономического события. Реально существующее время во всем множестве своих проявлений отражается в языке, выражая отношения между реальной действительностью и данной информацией. Как свидетельствует анализ фактического материала, темпоральная маркированность экономического события осуществляется посредством широкого спектра грамматических и лексических средств, выбор которых, в основном, предопределен намерениями автора и включает прямое или косвенное указание на время происшествия события. В бизнес новостях темпоральные маркеры определяют точность, достоверность, а также актуальность информации.

Ключевые слова: темпоральная маркированность, экономические события, бизнес новости, смысловая структура события, грамматические средства, временные лексические маркеры, реальное физическое время

L. HARUTYUNYAN – *Temporal Markers of Economic Events.* – The present paper seeks to analyze the types and functions of temporal markers in economic events. As is known, time localization is considered to be an inextricable part of any economic event. Real physical time is reflected in the language, maintaining correlation between the objective reality and the information provided. The element under issue is achieved via a wide range of grammatical and lexical means, the use of which is substantially preconditioned by the intentions of the author to directly/indirectly indicate the time of the event. In business news, temporal markers define the reliability and actuality of the given information.

Key words: temporal markers, economic events, business news, semantic structure of events, grammatical means, lexical units of time identification, real physical time